ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 21-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Իտալիայի կոպտուրայի աշխատողների և «Իտալիա—ՍՍՌՄ» ընկերության ղեկավար գործիչների դելեգացիան։ Դելեգացիային Մայր Աթոռում ընդունեցին Մայր Աթոռի միաբանները։ Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը հյուրերին առաջնորդեց Մայր Տաճար, ուր նրանք մանրամասն բացատրություններ լսեցին Տաճարի ճարտարապետական կառուցվածքի, ներսում գտնվող արժեքավոր եկեղեցական իրերի և Տաճարի ունիկում մանրանկարչական արվեստի մասին։

Վերջում հյուրերը եղան Մայր Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանում, ուր տեսան հնադարյան եկեղեցական թանկարժեք իրեր ու լսեցին մանրամասն բացատրություններ։

Վանքի բակում ի հիշատակ իրենց այցելությանը Մայր Աթոռ, հյուրերը լուսանկարվեցին Մայր Աթոռի միաբանների հետ։ Վերջում հյուրերը իրենց խորին գոհունակությունները հայտնեցին լավագույն ընդունելության համար և վերադարձան Երևան։

***

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց նաև Գերմանա-սովետական բարեկամության ընկերության դելեգացիան պարոն Ադոլֆ Ֆերբերի գլխավորությամբ։ Դելեգացիայի կազմում կային գիտության, կուլտուրայի, արվեստի գործիչներ, ժուռնալիստներ, արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարներ, ինժեներներ։

Հյուրերին ընդունեցին Մայր Աթոռի միաբանները։ Մայր Տաճարը դիտելուց հետո, հյուրերը եղան նաև Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանում, ուր շատ դոհ մնացին ավագ լուսարար բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանի մանրամասն բացատրությունները լսելով։

Հյուրերը հետաքրքրվեցին հայ եկեղեցական երաժշտությամբ։ Հոգևոր Ճեմարանի երաժշտության դասախոս Հ. Գեորգյանը հյուրերի ցանկությամբ կատարեց երգեհոնի վրա սուրբ պատարագի արարողությունից մի քանի գեղեցիկ կտորներ։ Հյուրերը իրենց հիացմունքը հայտնեցին լսելով հայկական եկեղեցական երաժշտության նմուշներ։ Նրանք մեծ զարմանքով դիտեցին նաև հայկական նոտագրությունը, որի մասին ըստ պատշաճի նրանց բացատրություններ տրվեցին։

Վերջում հյուրերը Մայր Աթոռի միաբանությունից իրենց խորին շնորհակալությունները հայտնեցին լավագույն ընդունելության համար և վերադարձան Երևան։

***

Նոյեմբերի 29-ին, կիրակի օրը, Մայր Տաճարում, ավագ սեղանի վրա մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Սուրբ պատարագի արարողություններից հետո Մայր Աթոռի միաբանությունը պարտ ու պատշաճ զգեստավորված թոլորել էր Ս. Իշման սեղանը։ Սուրբ պատարագից հետո, Ս. Իշման սեղանի առջև, Սովետական Հայաստանի 33-րդ տարեդարձի կապակցությամբ, կատարվեց կառավարական մաղթանք։ Հավուր պատշաճի քարոզ խոսեց օրվա հանդիսադիր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։